Արձանագրություն N 3
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 29 դեկտեմբերի 2017թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Օհանյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Ս. Մկրտչյան
	Ս. Շահմուրադյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Ա. Հակոբյան
	Հ. Ղազազյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ. Նավասարդյան

1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>
(Հ. Օհանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Բանակցությունների կազմակերպման մասին
3. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին
4. Գնահատման մասին
5. Հարցում կատարելու մասին
6. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

2. <u>Բանակցությունների կազմակերպման մասին</u>
(Հ. Օհանյան)

Ընդունել ի գիտություն քանի որ 1-ին և 2-րդ չափաբաժնների համար հայտ ներկայացրած և բավարար գնահատված կազմակերպության գնային առաջարկները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն առաջին տեղը զբաղեցնող կազմակերպությանը որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, բավարար գնահատված կազմակերպությունների հետ բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. դեկտեմբերի 29-ին ժամը 11:30-ին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենքում, հասցեն՝ ք. Երևան, ք. Երևան Գ. Հովսեփյան 26. բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցություններին մասնակցի կողմից նոր գնային առաջարկ է ներկայացվել «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից՝ 1-ին չափաբաժնի համար 3 171 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, 2-րդ չափաբաժնի համար 23 584 400 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

3. <u>Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին</u>
(Հ. Օհանյան)

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	**Բենզին պրեմիում**				3171000
1	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	2642500	528500	3171000	
2	**Բենզին ռեգուլյար**				23584400
1	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	19653666.67	3930733.33	23584400	
3	**Դիզելային վառելիք**				2625000
1	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	2187500	437500	2625000	

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

4.Գնահատման մասին

(Հ. Օհանյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	1, 2, 3,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

5.Հարցում կատարելու մասին

(Հ. Օհանյան)

ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում 8.12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

6.Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին

(Հ. Օհանյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

7.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Օհանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

Հանձնաժողովի.

նախագահ՝ Հ. Օհանյան

բացող անդամներ՝ Ս. Մկրտչյան

Ս. Շահմուրադյան

գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան

Հ. Ղազազյան

քարտուղար՝ Հ. Նավասարդյան